**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ "ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՌԵԱԿՏԻՎՆԵՐԻ» ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N <<ԳՀԱՊՁԲ-2020/15-4-ԵՊԲՀ-2>>**

ք. Երևան «___» «______» 2020 թ.

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր՝ **Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«ՌՈՄԱ» ՍՊԸ**-ը, ի դեմս տնօրեն **Ռ.Խոջաբագյան**-ի, որը գործում է **«ՌՈՄԱ»_ՍՊԸ**-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1637800 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացրած պահանջի:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

**4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և

---

[19] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար,ապա գնման առարկայի չմատակարարված,մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ

պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**<<ԳՆՈՐԴ>>**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**հ/հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**
**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

______________________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
**«ՌՈՄԱ» ՍՊԸ**
**Հասցե՝ ք. Երևան Ավան Բաբաջանյան 9/5,**
**Բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ**
**Հ/Հ 1510003864590100**
**ՀՎՀՀ 00045967**
**Հեռ՝ +374 11 99 99 69**
**Էլ.հասցե ՝ gnumner@romamed.am**
**Տնօրեն՝ Ռոման Խոջաբագյան**

KHOJABAGYAN ROMAN 1402800134
Digitally signed by KHOJABAGYAN ROMAN 1402800134
DN: c=AM, sn=••••••••••, givenName=•••••, serialNumber=adb7063198a8, cn=KHOJABAGYAN ROMAN 1402800134
Date: 2020.03.16 15:03:31 +04'00'
______________________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.24 13:04:21 AMT

Հավելված N 1
« » « » 2020 թ. կնքված
<<**ԳՀԱՊՁԲ-2020/15-4-ԵՊԲՀ-2**>> ծածկագրով պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

**ՀՀ դրամ**

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը,ֆիրմային անվանումը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 62 | 33691162/75 | Մաքրող լուծույթ ABX CLEANER | Մաքրող լուծույթ ABX CLEANER ABX CLEANER HORIBA ABX SAS | Մաքրող լուծույթ ABX CLEANER, Նախատեսված HORIBA Yumizen H500, H550 ավտոմատ հեմատոլոգիական վերլուծիչների համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 1լ մաքրող լուծույթ/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային | հատ | 44200 | 530400 | 12 | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 12 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ջերմաստիճան: Ֆիրմային նշանի և<br>նույնականացման գծիկավոր կոդի<br>առկայությունը փաթեթի վրա: Հանձնելու<br>պահին պիտանիության ժամկետի 1/2<br>առկայություն: For In Vitro Diagnostic:<br>Որակի սերտիֆիկատների<br>առկայություն: Ապրանքը<br>մատակարարելիս որակի<br>սերտիֆիկատի/ների առկայություն: | | | | | | | |
| 63 | 33691162/76 | Մաքրող լուծույթ ABX MINOCLAIR | Մաքրող լուծույթ<br>ABX MINOCLAIR<br>ABX<br>MINOCLAIR<br>HORIBA<br>ABX SAS | Մաքրող լուծույթ ABX MINOCLAIR,<br>նախատեսված HORIBA Yumizen H500,<br>H550 ավտոմատ հեմատոլոգիական<br>վերլուծիչների համար: Օրիգինալ:<br>Ֆորմատ՝ 500մլ մաքրող լուծույթ/հատ: | հատ | 39000 | 156000 | 4 | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 4 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Նոր, չօգտագործված, գործարանային<br>փաթեթավորմամբ: Պահպանման<br>պայմանները՝ սենյակային<br>ջերմաստիճան: Ֆիրմային նշանի<br>առկայությունը փաթեթի վրա: Հանձնելու<br>պահին պիտանիության ժամկետի 1/2<br>առկայություն: For In Vitro Diagnostic:<br>Ապրանքը մատակարարելիս որակի<br>սերտիֆիկատի/ների առկայություն: | | | | | | | պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 86 | 33691162/ 83 | Maglumi CA 125 որոշման թեստ հավաքածու | Maglumi CA 125<br>որոշման թեստ<br>հավաքածու<br>Maglumi CA<br>125<br>SNIBE | Maglumi 800 վերլուծիչի համար<br>նախատեսված, Maglumi CA 125<br>որոշման թեստ հավաքածու (Maglumi CA125): Օրիգինալ:<br>Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումին եսցենտային<br>անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, | հատ | 117800 | 117800 | 1 | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 1 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | | | | | | | ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 87 | 33691162/84 | Maglumi CA 19-9 որոշման թեստ հավաքածու | Maglumi CA 19-9 որոշման թեստ հավաքածու Maglumi CA 19-9 SNIBE | Maglumi 800 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi CA 19-9 որոշման թեստ հավաքածու (Maglumi CA 19-9): Օրիգինալ: Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումին եսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, | հատ | 117800 | 117800 | 1 | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 1 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` 2-8΄C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | | | | | | | 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 88 | 33691162/85 | Maglumi CA 15-3 որոշման թեստ հավաքածու | Maglumi CA 15-3 որոշման թեստ հավաքածու Maglumi CA 15-3 SNIBE | Maglumi 800 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi CA 15-3 որոշման թեստ հավաքածու (Maglumi CA 15-3): Օրիգինալ: Մեթոդ`Էլեկտրոխեմիլումին եսցենտային անալիզ: Ֆորմատ` 100 թեստ տուփում, | հատ | 117800 | 117800 | 1 | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 1 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | | | | | | | 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 89 | 33691162/86 | Maglumi HE-4 որոշման թեստ հավաքածու | Maglumi HE-4 որոշման թեստ հավաքածու Maglumi HE-4 SNIBE | Maglumi 800 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi HE-4 որոշման թեստ հավաքածու (Maglumi HE-4): Օրիգինալ: Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումին եսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, | հատ | 230200 | 230200 | 1 | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 1 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8ՙC ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | | | | | | | 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 90 | 33691162/87 | Maglumi Ալֆաֆետոպրոտեին որոշման թեստ հավաքածու | Maglumi Ալֆաֆետոպրոտեին որոշման թեստ հավաքածու Maglumi AFP SNIBE | Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված, Maglumi Ալֆաֆետոպրոտեինի որոշման թեստ հավաքածու (Maglumi AFP): Օրիգինալ: Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումին եսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, | հատ | 85800 | 85800 | 1 | | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 1 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պետք է լինի նոր,չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | | | | | | | 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 91 | 33691162/ 88 | Maglumi Ընդհանուր ՊՍԱ, PSA total որոշման թեստ հավաքածու | Maglumi Ընդհանուր ՊՍԱ, PSA total որոշման թեստ հավաքածու Maglumi PSA total SNIBE | Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված, Maglumi ընդհանուր ՊՍԱ որոշման թեստ հավաքածու (Maglumi PSA total): Օրիգինալ: Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումին եսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, | հատ | 93400 | 93400 | 1 | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 1 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` 2-8՛C ջերմաստիճանում: Յանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | | | | | | | օրացուցայի ն օրվա ընթացքում |
| 92 | 33691162/ 89 | Maglumi Ազատ ՊՍԱ, PSA free որոշման թեստ հավաքած ու | Maglumi Ազատ ՊՍԱ, PSA free որոշման թեստ հավաքածու Maglumi PSA free SNIBE | Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված, Maglumi ազատ ՊՍԱ որոշման թեստ հավաքածու (Maglumi PSA free): Օրիգինալ: Մեթոդ`Էլեկտրոխեմիլումին եսցենտային անալիզ: Ֆորմատ` 100 թեստ տուփում, | հատ | 113300 | 113300 | 1 | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 1 | Ապրանքի մատակարա րումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի ՝ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | | | | | | | 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 93 | 33691162/ 90 | Maglumi CEA որոշման թեստ հավաքածու | Maglumi CEA որոշման թեստ հավաքածու Maglumi CEA SNIBE | Maglumi 800 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi CEA որոշման թեստ հավաքածու (Maglumi CEA): Օրիգինալ: Մեթոդ`Էլեկտրոխեմիլումին եսցենտային անալիզ: Ֆորմատ` 100 թեստ տուփում, | հատ | 75300 | 75300 | 1 | Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով | 1 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic: | | | | | | | 20 օրացուցայի ն օրվա ընթացքում |

***Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:***
***Բոլոր չափաբաժիններում՝ եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:***

**<<ԳՆՈՐԴ>>**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**h/h 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**
**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

**_______________________**
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.24 13:05:52 AMT

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ՌՈՄԱ» ՍՊԸ**
**Հասցե՝ ք. Երևան Ավան Բաբաջանյան 9/5,**
**Բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ**
**Հ/Հ 1510003864590100**
**ՀՎՀՀ 00045967**
**Հեռ՝ +374 11 99 99 69**
**Էլ.հասցե ՝ gnumner@romamed.am**
**Տնօրեն՝ Ռոման Խոջաբագյան**

**_______________________**
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

KHOJABAGYAN ROMAN 1402800134

Digitally signed by KHOJABAGYAN ROMAN 1402800134
DN: c=AM, sn=··········, givenName=·····, serialNumber=adb7063198a8, cn=KHOJABAGYAN ROMAN 1402800134
Date: 2020.03.16 15:04:58 +04'00'

*Հավելված N 2*
*«      »      «      »      2020 թ. կնքված*
*<<ԳՀԱՊՁԲ-2020/15-4-ԵՊԲՀ-2>> ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 62 | 33691162/75 | Մաքրող լուծույթ ABX CLEANER | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 63 | 33691162/76 | Մաքրող լուծույթ ABX MINOCLAIR | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 86 | 33691162/83 | Maglumi CA 125 որոշման թեստ հավաքածու | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 87 | 33691162/84 | Maglumi CA 19-9 որոշման թեստ հավաքածու | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 88 | 33691162/85 | Maglumi CA 15-3 որոշման թեստ հավաքածու | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 89 | 33691162/86 | Maglumi HE-4 որոշման թեստ հավաքածու | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 90 | 33691162/87 | Maglumi Ալֆաֆետոպրոտեին որոշման թեստ հավաքածու | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 91 | 33691162/88 | Maglumi Ընդհանուր ՊՍԱ, PSA total որոշման թեստ հավաքածու | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 92 | 33691162/89 | Maglumi Ազատ ՊՍԱ, PSA free որոշման թեստ հավաքածու | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 93 | 33691162/90 | Maglumi CEA որոշման թեստ հավաքածու | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**<<ԳՆՈՐԴ>>**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**հ/հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**
**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

**______________________________**
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.24 13:06:28 AMT

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ՌՈՄԱ» ՍՊԸ**
**Հասցե՝ ք. Երևան Ավան Բաբաջանյան 9/5,**
**Բանկ՝ Արարատբանկ ԲԲԸ**
**Հ/Հ 1510003864590100**
**ՀՎՀՀ 00045967**
**Հեռ՝ +374 11 99 99 69**
**Էլ.հասցե ՝ gnumner@romamed.am**
**Տնօրեն՝ Ռոման Խոջաբագյան**

**__________________________**
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

KHOJABAGYAN ROMAN 1402800134

Digitally signed by KHOJABAGYAN ROMAN 1402800134
DN: c=AM, sn=••••••••••, givenName=•••••, serialNumber=adb7063198a8, cn=KHOJABAGYAN ROMAN 1402800134
Date: 2020.03.16 15:05:57 +04'00'

*Հավելված N 3*
*«     »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________________ | ______________________________ |
| ____________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը _________________ |
| հհ _________________________ | հհ____________________________ |
| հվհհ ________________________ | հվհհ___________________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«     » «          »  20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «          » 20     թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճար ման ժամկ ետը /ըստ վճար ման ժամա նակա ցույցի / |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________________ | ____________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«      »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ   N _______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________________
Գնորդի անվանումը
Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20    թ. ______________________________ -ին կնքված N _________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20  թ. _________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ____________________________<br>ազգանուն, անուն | ____________________________<br>ազգանուն, անուն |
| ____________________________<br>Ստորագրություն | ____________________________<br>ստորագրություն |